25 մարտի 2010 թվականի N 300 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N 878-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի 4.3.3-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1	2	3	4	5	6	7	8
2. ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է լինելու ֆինանսական կազմակերպությունների սնանկացման մասին ՀՀ օրենսդրության՝ Եվրամիության օրենսդրությանը համահունչ վերամշակմանը	2.1. ֆինանսական կազմակերպությունների սնանկության մասին ՀՀ օրենսդրության համապատասխանեցում Եվրամիության օրենսդրությանը				2011-ֆինանսական կազմակերպությունների սնանկության մասին ՀՀ օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ ՀՀ օրենքների նախագծեր ներկայացնելը	2012-ֆինանսական կազմակերպությունների սնանկության մասին ՀՀ օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ ՀՀ օրենքներին համապատասխան՝ ֆինանսական կազմակերպությունների սնանկության գործընթացների իրականացում, ֆինանսական համակարգի արդյունավետության բարձրացում	ՀՀ կենտրոնական բանկ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. մարտի
Երևան

10_0300